ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԵՊՀ Հրանտ Թամրազյանի անվան
գրականության պատմության ամբիոնի մագիստրոս
ՀՏԴ 821.19.0:1/14

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԱՏԿԵՐՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. Նիրվանա, Շոպենհաուեր, բուդդայականություն, Թումանյան, Ինտրա, Անհուն, վոլտերյան եռոտանի, Նիցշե, բանաստեղծություն, Գերմարդ:

Ключевые слова и выражения: Нирвана, Шопенгауер, буддизм, Туманян, Интра, безконечность, вольтерский штатив, Ницше, стихотворение, Сверхчеловек.

Key words and expressions: Nirvana, Schopenhauer, Buddhism, Tumanyan, Intra, fathomless, volter's tripod, Nietzsche, poem, Superman.

20-րդ դարասկզբի գրականության մեջ մեծ մասամբ առկա է նախորդ դարավերջի փիլիսոփայության էական ազդեցությունը. Փաստ, որը հիմք է տալիս անդրադառնալու հենց այդ շրջանին: Դարասկզբին գրականության մեջ մեծ տարածում գտավ Ֆ. Նիցշեի փիլիսոփայությունը, «Գերմարդու» գաղափարը: 19-րդ դարի 90-ականներից Նիցշեի աշխատանքների հոչակին չէին զիջում նաև Ա. Բերգսոնի արվեստը, հայացքները: Կարևորվում էր ներհայեցությունը: 20-րդ դարասկզբին ֆրանսիական գրականության մեջ իշխող էր բանաստեղծությունը. Այլևս փոխված իրականությունը, նոր իրադարձությունները «ստիպում» էին գրողներին արագ արձագանքել, հետևաբար առավել «հարմար» էր չափածոն: Դասական վեպերից (բալզակյան ոճի) հետզհետե բացակայում էր ինտրիգը, սյուժեն, տիպական բնավորությունները, և նոր թափով գրականություն էր ներխուժում չափածոն[1]: Այս շրջանում չափածոն տիրապետող էր նաև հայ գրականության մեջ, իսկ հիմնական թեման կյանք-մահ հավերժի ձևերն էին, սերը, ընդ որում, մի կողմից մահ հասկացության փիլիսոփայական կողմն էր քննվում, մյուս կողմից հայությունն անմիջաբար զգում էր մահը՝ ենթարկվելով թուրքի յաթաղանին: Այս ընթացքում էլ նեոռոմանտիզմի շարժումը, ըստ Հոնիգսհայմի, ծնվեց

[1] Французская литература в начале 20 века, https://ru.wikipedia.org/wiki/:

հանկարծակի և սկզբում մնաց աննկատ[2]: Շատերը այս նոր մեթոդը սիմվոլիզմի ուղղությունից չէին տարբերակում:

Ոչնչի, Անհունի, Նիրվանայի մասին խոհը Ա. Ալեքսանյանը համարում է 20-րդ դարասկզբի համար խիստ հատկանշական և հատկապես Ռուբեն Սևակի պոեզիայի այս շերտում ազդեցությունն է տեսնում բուդդայական ուսմունքի, ընդ որում, Սևակի խոհափիլիսոփայությունն ամբողջությամբ կապում է այս ուսմունքի հետ, ինչն, անշուշտ, անընդունելի է[3]: Մեծ հավերժի ձևերի մասին խոհերը գրողին ստիպել են հասնել մինչև «մեծ ինչուի» անպատասխանելի հարցին. «Անհունություն մը ժամանակը, անհունություն մը միջոցը. Ու մարդ հյուլե մը այս երկու անհունություններուն մեջ կորսված. Անհունություն մը և այդ հյուլեն: Ով և ինչու դրած էր այդ անհունությունը մարդուս մեջ: Իմանալու զգալու, կամելու այդ աշխարհները պետք չէ՞ր որ ուղղություն մը՝ կետ նպատակի մը օրենք մ՛ ունենային իր մեջ: Իր մտածումը դուրս նետեց կյանքի անձուկ եզրերեն, դուրս նյութի այս աշխարհեն, ու անհունեն, բացարձակին մեջ գնաց հարցնել իր մեծ «ինչու»-ն կյանքին, մարդուն «ինչու»-ն»[4]: Անհունի, մահվան մասին Վարուժանի խոհն էլ հանգում է հարցադրման, ոչ վերլուծության.

Վախճանողին գացած ճամփան. Ոհ, ի զուր
Կը փընտրեմ հոն, իմ շուրջ,
Անոր անուն ի՞նչ է, կամ ի՞նչ է անունն
Անդրրշիրմի Եղածին, ու՞ր է Անհունն,
Ու՞ր է Խորհուրդն.Աղջամուղջ:
Ոհ, դու ո՞վ ես, ո՛վ անծանոթ վախճանած[5]:

Անհունի, Անհայտի որոնումներում Ինտրայի եզրակացությունները ընդհանրանում են Սևակի տեսակետների հետ. «Ոչ թէ «Մարդը չափն է ամենայնի», այլ անտարակոյս Անհունը: Յոյն փիլիսոփան (Պրոտագորաս Աբդերցի-Ա. Ս.) իրաւունք պիտի ունենար, միա՛յն երբ մարդը նկատէր իբրեւ մէկ իմացումը Բացարձակին: Յանժամ, արդարեւ, Անհունին ըմբռնումը՝ չափը կ՛ըլլար ուրիշ ամեն ծանօթութեան, կամ ինչ որ նոյն է, Անհունը՝ ամենայնի: Կեանքը հասկնալի է Յավերժութեամբ միայն: Ինչպե՞ս

[2] Տե՛ս ***Йонин Л.,*** Георг Зиммель - социолог, Москва, 1981, էջ 10:
[3] Տե՛ս ***Ալեքսանյան Ա.***, Ռուբեն Սևակի կենսափիլիսոփայությունը, «Ռուբեն Սևակ. 125», Հոդվածների ժողովածու, Երևան, 2011, էջ 139:
[4] **Ռ. Սևակ**, Երկեր, Երևան, 1985, էջ 23: Այս գրքից հաջորդ մեջբերումները կնշվեն տեքստում:
[5] ***Վարուժան Դ.***, ԵԼԺ, Հ. 1, Երևան,1986, էջ 43:

անչափելին կրնայ իբր չափ ծառայել. Եւ սակայն այդպէս է…տիեզերքը բոլոր, կը չափենք անո՛վ որ անկախ է ամենայնէ…միակ բան մը կա հասկնալի. Բացարձակն է այն. Ի՞նչ են օրէնքները զոր երեւոյթներուն ծոցին մէջ կը գտնենք յաղթական եթէ ոչ Բացարձակի եղանակաւորումներ, որոնցմով երեւոյթները կը բացատրենք»[6]:

Սևակը Ինտրայի նման Անհունի մեջ կարևորում է սիրո գերակայությունը: Սերը բարձրացնում է մարդուն նյութական կեցության օրենքներից դեպի հոգեկանության ոլորտներ, ինչը իր ուսմունքի հետևորդների համար նշանակում է մոտ լինել Նիրվանայի[7] երանությանը: Ըստ հնդիկների՝ Նիրվանան երանության, մոռացության աշխարհն է: Այդ ուսմունքի, ինչպես նաև շոպենհաուերյան փիլիսոփայության ազդեցությունը կա Սևակի «Մարդերգություն» պոեմում: Անհավասարությունն ու սոցիալական հակասությունները, աղքատի հանդեպ դաժան վերաբերմունքը, կյանքում կատարվող անարդարությունները, մարդկանց՝ օրեօր ակամա վատին ձգտելը, հոգևոր արժեքների կորուստը ստիպում էին հեղինակներին փնտրել ուրիշ մի աշխարհ, իրենց պատկերացումների աշխարհը, կամ նախընտրում են մահը՝ հավասարության դաշտը ու Նիրվանան: Այս ամենի արձագանքն ենք տեսնում Սևակի պոեմում: Արևելյան կողմում Ավ. Իսահակյանն էլ Սևակի նման իր խոհափիլիսոփայության մեջ զուգահեռել էր Արևելքի ու Արևմուտքի փիլիսոփայությունները, նրա գեղարվեստական գործերի մեջ միախառնված են Նիցշեի ու Շոպենհաուերի փիլիսոփայությունը, Նիրվանայի ձգտումը. «Նիրվանան լոկ ճշմարտությունն է և ամենի վերջը…Նա տիեզերքի երազն է, կյանքն է, հիացմունքն է – մենք անասուն ենք եղել, այժմ կիսաանասուն մարդ ենք, պիտի դառնանք հաստատ մարդ, հետո մարդ-աստված, հետո միայն աստված…և Նիրվանայում հանգչենք…Միայն Նիրվանայով կարելի է ոգևորվել. Միայն մեր ոգևորության ամենալայն հորիզոնը դա է: Նիրվանան՝ մնայուն, հավիտենական…»[8]: Ավ. Իսահակյանի պոեզիայում Նիրվանան մեծ լռության և խաղաղության խորհուրդն է բերում.

Ձայն-ձուն չըկա, սիրտս է միայն-
Մեծ լռության վեհ լեզուն՝

---

[6] ***Ինտրա***, Հովին ձայնը, Երկեր, Գիրք Ա, Երևան, 2014, էջ 449:

[7] Նիրվանա-Հին հնդկական կրոնական ուսմունքի (բուդդայականության) համաձայն՝ աշխարհային ամեն ինչից հրաժարվելու միջոցով ձեռք բերվող երանավետ հանգստի վիճակ., փխբ. անդորր, երանավետ հանգստություն:

[8] ***Իսահակյան Ավ.***, Երկեր, Երևան, 1987, էջ 592:

Տիեզերքը գըրկած համայն-
Զանգի նըման դողանջում[9]:

Այդպիսին է և Եղիա Տեմիրճիպաշյանի պատկերած Նիրվանան: Մարդու հանդեպ մեծ սիրուց ծնվում է մեծ ցավը, ափսոսանքը, ու այդ տառապանքը հաղթահարելու համար հեղինակները հայացքը հառում են դեպի խաղաղ ներդաշնությունը: Սևակի, Իսահակյանի, Տեմիրճիպաշյանի մոտեցումներն այս դեպքում ընդհանրական են: Նիրվանայի մեջ չկա տառապանք, դա խաղաղության ձգտող մարդու համար օրհնություն է: Ըստ Տեմիրճիպաշյանի՝ կյանքում ամեն ինչ հանգում է Ոչնչին, ունայն է ամեն ինչ, հետևաբար ի սկզբանե ձգտումը դեպի Նիրվանան, ճշմարիտ ուղին է. Գիտությունս է, տենչս է միակ-Նիրվանա…[10]

«Նիրվանա» պոեմի բնաբանը խոսուն փաստ է հեղինակի ըմբռնման մեկնաբանման համար.

Հոգիս համակ լցված է կարեկցությամբ աշխարհի հիվանդության համար…

Սաքիա-Մունի

Ես զայն ցանկամ, զանեացումն իմ եսին
Հանհատակ ծոց տիեզերաց անպարույր.
Ցանկամ զհանգիստ ի ջուրս ի սուրբ Գանգեսին,-
Գանկն իմ լիցի թաղար ծաղկին սրբաբույր.
Զիմ էության վախճան ցանկամ, իմս Օհան,
Զոչնչությունն անգյուտ, անճառ, անվախճան…[11]

Տեմիրճիպաշյանի պոեզիայում արծարծված կյանք, մահ, նիրվանա թեմաների մասին խոսելիս Ս. Թոփչյանը գրում է. «Տեմիրճիպաշյանը նիրվանան չի շփոթում ոչնչի հետ: Նիրվանայի գաղափարը բարձրագույն հարմոնիայի հասնելու միջոց է նրա ըմբռնումով, «անդրաշխարհային մեղեդի», որ մարդկային ոչ մի նվագով հնարավոր չէ արտահայտել: Այս գաղափարը ավարտն է տառապանքի, միայնության, «մեծ տխրության»[12]: Սևակի, Իսահակյանի՝ Նիրվանային ձգտումը նույնպես չի հասնում Ոչնչի ձգտման: Արմեն Սևանը ընդհանրություններ է տեսնում Տեմիրճիպաշյանի խոհափիլիսոփայության ու Սևակի «Մեծդ Աստված» բանաստեղծության միջև. «Մահվան շունչով օծուն, գեղեցիկ, և Տեմիրճիպաշեանական թռիչքով ու մեծվայելչութեամբ բանաստեղծութիւն մ՝ է «Մեծդ Աստուածը», որով

[9] ***Իսահակյան Ավ.***, Նույն տեղում, էջ 155:
[10] ***Տեմիրճիպաշյան Ե.***, Երկեր, Երևան, 1986, էջ 54:
[11] ***Տեմիրճիպաշյան Ե.***, Նույն տեղում, էջ 58:
[12] ***Թոփչյան Ս.***, «Եղիա Տեմիրճիպաշյան, Երկեր», Երևան, 1986, էջ 18:

բանաստեղծը, հրաշափառ տիեզերքն ու բնությունը տարփողելէ յետոյ, կ՝ անդրադառանայ մարդ էակին թշուառութեան ու անկարութեան, իրապէս ներշնչուած և ժուժկալ տողերով»[13]:

Ահա՛ Մարդերդ: Ահա Մարդերդ ալ Աստուած,
Տխուր հիւրերն այս հրաշագեղ աշխարհքին.
Թափառական, վաղորդայնեն ընկճված,
Ճղճի՛մ, թշվա՛ռ, հո՛ղին կառչած, ախտա՛գին: (144)

Մենք չենք տեսնում էական ընդհանրություններ երկու բանաստեղծների միջև, ավելին, կան որոշ հակասություններ. Տեմիրճիպաշյանի ստեղծագործության մեջ իշխող է երազը, հուշը, տրտմությունը, անընդհատ խոհը, իսկ Սևակի պոեզիան կենսաշատ է: Սևակը լուծումներ, ելքեր է առաջադրում, անտարբեր չէ մարդկության ապագայի հանդեպ: Այս բանաստեղծության մեջ Սևակը հակադրում է կատարյալ բնությունն ու անկատար մարդուն, որը պիտի արժանանա բնության գեղեցկությունը վայելելու հաճույքին, արժանի լինի բնության կատարելությանը: Էդ. Ջրբաշյանը զուգահեռներ է տեսնում Սևակի վերոնշյալ բանաստեղծության ու Հ. Թումանյանի «Բարձրից» բանաստեղծության միջև[14], որը, կարծում ենք, շատ ավելի համոզիչ է, քան Արմեն Սևանի բերած զուգահեռը: Հ. Թումանյանն էլ տեսնում է կատարյալ բնությունը, որին հակադրվում է մարդկային տառապալից կյանքը, մարդն է իր կյանքը դարձրել «ահավոր ջեհնեմ».

Տեսավ աշխարհքը՝ գեղեցիկ, անվերջ
Եվ հայրենիքներն անձուկ նըրա մեջ…
Տեսավ ուտում են ամենքն ամենքին…
Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած…[15]

Թե՛ Եվրոպայի ախտն ու աղտը, թե՛ դարասկզբում հայության հալածանքները կարևորագույն գործոններ էին, որոնք պարզապես ստիպում են գրողներին լցվել հոռետեսությամբ (թեկուզև մի պահ), երազել Նիրվանայի մասին: Եվրոպայի վիճակը շատ լավ պատկերացնում էր և՛ Սևակը՝ լինելով այդ միջավայրի ականատես, և՝ Իսահակյանը, ով ևս հասցրել էր ճանաչել վտանգներով լեցուն ժամանակն ու մարդկանց:

Գրականության մեջ ավարտի, մահվան մասին մտքերի անընդհատ արծարծման առումով գրականագետ Ալ. Թոփչյանը գրում է. «Եվրոպական գեղարվեստական միտքը դարասկիզբ էր մտնում

---

[13] ***Արմեն Սևան***, Նահատակ գրողներ, Գիրք Ա, Սոֆիա, 1931, էջ 78:
[14] Տե՛ս ***Ջրբաշյան Էդ.***, Ռուբեն Սևակ, Երևան, 1965, էջ 66:
[15] ***Թումանյան Հ.***, Երկեր, Երևան, 1978, էջ 54:

գաղափարների վերջալույսի շողերի տակ: Իշխողը ավարտի խորհուրդն էր: Այդ ավարտը սիմվոլիստների համար նորի հաստատման, կայացման խորհուրդ էր» [16]:

Ըստ Վլադիմիր Կիրակոսյանի՝ «Սաքիա-Մունի» բանաստեղծության ազդակը շոպենհաուերյան փիլիսոփայությունն է, որ շատ ընդհանրություններ ունի բուդդայական ուսմունքի հետ: Բանաստեղծությունը կառուցվածքով նմանեցնում է Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» աշխատությանը[17]: Փոխվել է մարդը, նա չի կարող ըմբռնել ճշմարտությունը, երազը, դրամը փոխել է մարդուն: Անշուշտ, ժամանակը իր ազդեցությունը պիտի ունենար գրողի խոհափիլիսոփայության վրա, հատկապես «Մարդերգության» մեջ Մահվան վերաբերյալ դատողությունները ազդակ են Շոպենհաուերի փիլիսոփայության. «Մինչև անգամ մահվան շեմին, մենք ձգտում ենք կամ դեպի հեռավոր ապագան, կամ հեռավոր անցյալը, իսկ ներկան երբեք չի բավարարում մեզ: Մենք նկատում ենք, որ ամբողջ կյանքում հետամուտ ենք եղել տեսիլապատկերների և մեր կամքը բավարարող ոչինչ չենք գտել: Ներկա կյանքը մեզ բավարարել չի կարող»[18]: Այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ արևմտահայության ծանր վիճակը, ջարդի ու հալածանքի լուրերը հասնում էին օտար երկրներում գտնվող ուսանողներին ու նրանք ժամանակի հոռետեսական փիլիսոփայությանը գումարում էին իրենց ազգային ցավը, մահվան թեման արծարծվում էր երկու առումով՝ հավերժություն և խավար: Արմեն Սևանը գրում է. «Սիրոյ և մահվան գաղափարները անբաժան են բանաստեղծին մտածողության մեջ. Ամէնէն երջանիկ պահու մ՚իսկ, մահուան սև շուքը իր ներկայութիւնը կը զգացնէ և քերթողը տեւապէս կ՚ապրի անոր մղձաւանջին տակ»[19]:

Զրադաշտի խոսքերը՝ «Մարդը մի բան է, որ պետք է հաղթահարվի»[20], ըստ Սևակի՝ պիտի հաղթահարի ինքն իրենից բարձրանալով, ինքն իրեն հաղթելով, դա պետք է լինի աշխատանքի շնորհիվ, մինչդեռ Նիցշեի ուսմունքը, օրինակ, հակադրվում է այս գաղափարներին, այն մարդուն տանում է ծուլության: Այս տեսանկյունից Սևակի գաղափարը հարազատ է

---

[16] ***Թոփչյան Ալ.***, Պարտքի և պատվի ասպետը, «Ռ. Սևակ.125», Հոդվածների ժողովածու, Երևան, 2011, էջ 6:

[17] Տե՛ս ***Կիրակոսյան Վ.***, Ռուբեն Սևակ, Երևան, 1972, էջ 74:

[18] ***Шопенгауер А.***, Статьи эстетические , философские.Афоризмы, Харков, 1888, էջ 232:

[19] ***Արմէն Սևան***, Նշվ.աշխ., էջ 99:

[20] ***Նիցշե Ֆ.***,, Այսպես խոսեց Զրադաշտը, Երևան, 2011, էջ 47:

Ռուդոլֆ Շտայների փիլիսոփայությանը. «Անձը ոչ թե հաղթահարվում է, այլ ենթարկվում է բարձրագույն ձևավորման»[21]:

Աստծո գոյության, մարդու՝ աշխարհում միայնակ լինելու խնդիրը խորապես արտահայտվեց էքզիստենցիալիզմի գրականության երկու թևերում (Աթեիստական, Կրոնական): Գոյության խնդրի հարցերը արծարծվում էին հայ գրականության մեջ՝ առանց այդ անվանելու էքզիստենցիալ կամ մեկ այլ անվանմամբ, արևելահայ թևում Ավ. Իսահակյանի խոհափիլսոփայության մեջ ենք տեսնում այդ ուղղության տարրեր: «Պրոսխումե» (Ուշադրություն) սոնետում Ինտրան մարդու՝ Աստծուն հասնելու ուղին տեսնում էր մաքրության միջոցով[22]: Ներքին մաքրությունը միակ ճանապարհն է: Այսպես է և «Բժշկին գիրքեն փրցված էջեր»-ում Սևակի լուծումը, համոզմունքը, վոլտերյան եռոտանին պիտի ուղենիշ լինի մարդու համար՝ աշխատասիրություն, մաքրություն, չափավորություն (318):

20-րդ դարասկզբին, երբ աշխարհը մերժում էր Աստծո գոյությունը, գրականության մեջ կասկածի տակ էր առնված այդ հարցը, Ինտրան քարոզում էր Ավետարանը. «Ինչպես ամեն բան գեղեցիկ է տառապանքեն ետքը»[23]: Ինտրայի այս տողը մի ամբողջ փիլիսոփայական ուսմունքի արդյունք է, նա դնում է Աստծո գոյության ու մարդու տառապանքի խնդիրը, միևնույն ժամանակ գոյության՝ էքզիստենցի խնդիրը, ասես էքզիստենցիալ ուղղության կրոնական թևի ներկայացուցիչ լինի: Իսկ Ռուբեն Սևակը դնում է էքզիստենցիալ հարցեր, ու չի ընդունում Աստծո գոյության փաստը (աթեիստական թևի ներկայացուցիչ), մարդը միայնակ է, բայց ինքն իրեն կարող է պաշտպանել ու պետք է ունենա կամք. «Որոշե՛, պայքարե՛, կամքով և հավատքով (Սեփական ուժերի նկատմամբ հավատ-Ա.Ս.)հառաջ մղե նպատակդ ու հաջողությունը պիտի հասնի քեզ…Կամք ու պայքար: Ասոնք են հաջողության ծնողքները» (385):

Կամքի խնդիրը էքզիստենցիալիզմի մեջ կարևորագույնն էր, հիմնական առանցքը: Սևակը փորձում է ապրելու կամք, ապրելու հանդեպ սեր ներարկել մարդկանց մեջ, օրինակներ ցույց տալ, պատասխաններ մատնանշել («Բժշկին գիրքեն փրցված էջեր»): Այդպիսին են նաև Ժան Պոլ Սարտրի էքզիստենցիալիստական հայացքները: Ըստ Սարտրի՝ ամենաանելանելի իրավիճակներում նույնիսկ ելք կա, իսկ այդ ելքը մարդու

---

[21] ***Շտայներ Ռ.***, Թեոսոֆիա, Երևան, 2003, էջ 67:

[22] ***Ինտրա, Հովին*** ձայնը, էջ 305:

[23] ***Ինտրա,*** Ներաշխարհ, Երևան, 2006, էջ 67:

գործունեությունն է: Եթե ինչ-որ տեղ գնում ես, ինչ-որ տեղ կհասնես[24]: Չնայած էական է այս մեթոդի դրսևորումները հայ գրականության մեջ, այնուամենայնիվ, մենք հակված ենք Ս. Թոփչյանի տեսակետին, որի կարծիքով կամքի կարևորումը գալիս էր Ա. Շոպենհաուերի փիլիսոփայությունից: Գոյի ներքին էությունը՝ կամքը, իմացությունը ենթարկում է իրեն որպես մարդու և ցեղի պահպանման միջոց. «Նեոռոմանտիկների տեսական ու ստեղծագործական պրակտիկայում կիրառվում էին նրա (Շոպենհաուերի-Ա. Ս.) փիլիսոփայության հիմնական որոշ դրույթներ ու հասկացություններ, որոշ այլափոխությամբ ու հարմարեցնելով պատմական հանգամանքներին»[25]: Ռուբեն Սևակի փիլիսոփայության էական առանձնահատկությունը կենսաշատությունն է: Սևակի համար սերը հաղթող գործոն է, ու եթե այն կա, մահը սարսափելի չէ, քանի որ սերը կարող է մահվան մեջ էլ ունենալ շարունակություն, ինչպես կյանքը, որի շարունակությունն է մահը, Անհունը: Մահը կյանքի շարունակությունն է, կամ կյանքի հավերժ գոյությունը: Սա նաև Հ. Թումանյանի խոհափիլիսոփայության կենտրոնական գաղափարներից է: «Ոստան»-ի երկրորդ համարում տպվում է Հ. Թումանյանի «Դեպի Անհունը» պոեմը[26], ինչն, անշուշտ, պատահական չէր, ինչո՞ւ հենց այդ փիլիսոփայական գործը. Իհարկե ժամանակի և արդիական թեմայի պահանջով:

Թե մահը լավ է, միայն մենք՝ տգետ,
Մենք խեղճ, կարճամիտ, ու չենք հասկանում՝
Ինչպես է գալիս և ուր է տանում…
Էսօրն ինչ է որ ,-մի երեկ է նոր,
Էսօրն էլ կանցնի, երեկ կըդառնա,
Հավերժականը չունի կերպարանք,
Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեր…[27]

Հ. Թումանյանի խոհափիլիսոփայության մեջ առանցքային է «Դեպի Անհունը» պոեմը, որում արտահայտված գաղափարները ընդհանրանում են Ռուբեն Սևակի խոհափիլիսոփայության հետ. «Ուրեմն մեռե՞ր է: Ինչպե՞ս հավատալ…ինչպե՞ս չհավատալ…Ի՞նչ էր կյանքը, ու մահը ի՞նչ…Ո՞րն էր իրական, ո՞րն էր անիրական…»(274): Մինչդեռ Ինտրային այս հարցում

[24] ***Сартр Ж. П.***, Экзистенциализм это гумманизм, http://scepsis.net/library/id-545.html:
[25] ***Թոփչյան Ս.***, Ռուբեն Սևակ, Երկեր, Երևան, 1985, էջ 11:
[26] Տե՛ս «Ոստան», Կ.Պոլիս, 1911,Ա տարի, № 2, էջ 276-283:
[27] ***Թումանյան Հ.***, Նշվ. աշխ., էջ 356:

բնորոշ է դուրյանական կասկածի կերպը (հարցման միջոցով ժխտումը, կասկածը).

Եթե հու՛սկ այգն ալ որում հէք հոգին կ՝անձկայ,
Դատարկն է, զուրկ Յայտնութեան պաղպաջէն անհուն,
Լա՛ւ է, փշոց հետ, գլխիկոր չըքանալ այժմէն[28]:

Հ. Թումանյանի նման Սևակն էլ նայում է հավերժ փայլող աստղին՝ գուշակելու մարդու թվավորված ժամանակի մեջ դրված կյանքի խորհուրդն ու գաղտնիքը, ու եթե Թումանյանի աստղը Սիրիուսն էր՝ ամենապայծառն ու հեռավորը, Սևակը պարզապես նայում է մի աստղի, բայց ամեն անգամ գտնում նրան երկնքի անհունի մեջ ու իրեն շատ մոտ, աստղը Անհունի գոյության վերջին հույսն է.

Դուն կաս ու չիկաս,- խաբկանքը լույսին.
Դուն Հույսն ես հեռվի,- Հույսը անհույսին…
Ու երբ արցունքոտ բիբերս կհևան,
Ես քեզ կնայիմ, ով Աստղ իրկվան:
Կյանքը երգ մ՝է քիչ…Ու ի՞նչ կյանք, Աստված.
Միշտ Հույսին հարած ու միշտ ալ խաբված…
-Ծեր է սիրտս, բայց աչերս սիրակեզ,
Ով Աստղ իրիկվան, դեռ կնայիմ քեզ…(174)

Ա. Ստեփանյան

Ռուբեն Սևակի փիլիսոփայությունը 20-րդ դարասկզբի փիլիսոփայության համապատկերում

Ամփոփում

Ռուբեն Սևակի խոհափիլիսոփայությունը արձագանքն էր իր ժամանակի ու մտածողության: Թեև Սևակի ստեղծագործության մեջ զգալի է Նիցշեի, Շոպենհաուերի, բուդդայական ուսմունքի ազդեցությունը, այնուամենայնիվ, գրողի փիլիսոփայության մեջ կարևորվում է կենսասիրությունը, մարդասիրությունը: Իր փիլիսոփայությամբ Սևակը մարդկության փրկության համար լուծումներ է առաջարկում՝ աշխատասիրություն, մաքրություն, չափավորություն:

А. Степанян

Философия Рубена Севака в контексте философии 20-го века

Резюме

Философия Рубена Севака была отражением мысли его времени. Хотя в произведениях Севака велико воздействие Ницше, Шопенгауера и

[28] ***Ինտրա,*** նշվ. աշխ., էջ 378:

буддисткого учения, поэт также выделяет жизнелюбие и гумманизм. Своей философией Севак предлагает трудолюбие, чистоту и скромность, как решение для спасения человечества.

A. Stepanyan

Ruben Sevak's Philosophy in the Context of the 20th Century Philosophy.

Summary

The philosophy of Ruben Sevak was the reverbation of time and thought.Although Sevak's work was affected by Nitzsche, Schopenhauer and Buddhism, he also stressed the love towards life ans humanism. With his philosophy, Sevak proposes iligence, purity and modesty as a cure for humanity.